Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 5-ի ժամը 16^{00} –ին կայացած նիստի

Արձանագրություն N 1

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նպատակների և խնդիրների մասին:
2. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների գործունեության կարգերի հաստատում:
3. 2008 թվականի ընթացքում Ազգային հանձնաժողովում քննարկման համար նախատեսված հարցեր.
   - հաշմանդամների սոցիալական ինտեգրման ռազմավարության նախագծի քննարկում.
   - Հաշմանդամերի աջակցության Հիմնադրամի ստեղծում.
   - հաշմանդամների համար ֆիզիկական մատչելիության ապահովում.
   - հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2009 թվականի տարեկան ծրագրի նախագծի քննարկում.
   - հաշմանդամություն ունեցող անձանց համար անխոչընդոտ միջավայր ապահովող «Մատչելի համայնք» մրցույթ.
   - Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ մեկամսյակի միջոցառումներ:
4. Այլ հարցեր:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ

Ա. Վարդանյան՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամները՝

Հ. Դարբինյան՝ ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Գ. Մալխասյան՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Ժ. Ասատրյան՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ
Վ. Տերտերյան՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Տ. Հարությունյան՝ ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ
Ա. Ալավերդյան՝ "Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության "ՈՒՆԻՍՈՆ" հ/կ նախագահ
Ա. Գրիգորյան՝ "Հայաստանի խուլերի միավորում" հ/կ նախագահ
Ս. Թադեւոսյան՝ "Հույսի կամուրջ" հաշմանդամ երեխաների եւ երիտասարդների իրավունքների պաշտպանություն"

հ/կ նախագահ
Ա. Հակոբյան՝ "Հայաստանի կույրերի միավորում" հ/կ նախագահ
Ա. Մկրտչյան՝ "Սկարպ" առողջական կենտրոն" հ/կ նախագահ
Լ. Ներսիսյան՝ "Աստղիկ" հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա" հ/կ նախագահ
Ս. Օհանյան՝ "Հաշմանդամների "Փարոս" կրթության եւ մշակույթի զարգացման կենտրոն" հ/կ նախագահ
Ջ. Բաղդասարյան՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հացերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների եւ տարեցների հիմնահարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հրավիրվածներ՝
Ֆ. Բերիկյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Մ. Վանյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետ
Հ. Գորոյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավաբանական վարչության պետ
Հ. Խաչատրյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի բաժնի աշխատակիցները:

Ա. Վարդանյանը, շնորհավորելով հանձնաժողովի անդամներին առաջին նիստի կապակցությամբ, նշեց, որ պետության և հասարարական կազմակերպությունների համագործակցությունը կարևոր է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության, սոցիալական ներառման և հավասար հնարավորությունների ապահովման գործընթացը համալիր կազմակերպելու և իրականացնելու նպատակով:

Լսեցին՝ հանձնաժողովի քարտուղար Ջ. Բաղդասարյանին

Նա ներկայացրեց օրակարգի 1-ին և 2-րդ հարցերը՝ հանձնաժողովի նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների գործունեության կարգերը և անհատական կազմերը, նշելով, որ մարզային /Երևան քաղաքի/ հանձնաժողովների գործունեության կարգերը մշակվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված գործունեության օրինակելի կարգի հիման վրա, իսկ յուրաքանչյուր հանձնաժողովի անհատական կազմը հաստատել է մարզպետը /Երևանի քաղաքապետը/ նախարարության տրամադրած գործունեության օրինակելի կարգին կից ցանկի հիման վրա:

Արտահայտվեցին՝

Վ. Տերտերյանն առաջարկեց մարզային /Երևան քաղաքի/ հանձնաժողովի գործունեության կարգում ավելացնել, ըստ որի հանձնաժողովի անհատական կազմում պետք է ընդգրկվեն նաև քաղաքային համայնքների ղեկավարները: Հաշվի առնելով, որ մարզային /Երևան քաղաքի/ հանձնաժողովի գործունեության կարգի 13-րդ կետով

հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել պետական մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, քաղաքային համայնքների ղեկավարները կարող են հրավիրվել՝ ելնելով նիստում քննարկվող հարցերի հրատապությունից։

Ա. Ալավերդյանը նշեց, որ պետք է մարզային /Երևան քաղաքի/ հանձնաժողովներին օժտել որոշում կայացնելու իրավասությամբ։

Ս. Օհանյանն առաջարկեց Արագածոտնի մարզի հանձնաժողովի անահատական կազմում, որպես հանձնաժողովի անդամ ընդգրկել «Թալին հույս» հ/կ նախագահին։

Որոշեցին՝

- Վերանայել մարզային /Երևան քաղաքի/ հանձնաժողովի գործունեության կարգը և համաձայնեցնել հանձնաժողովի անդամների հետ,
- Արագածոտնի մարզի հանձնաժողովի հետ քննարկել «Թալին հույս» հ/կ-ի նախագահին հանձնաժողովի կազմում ներառելու հարցը։

Լսեցին՝ տիկին Բաղդասարյանին

Օրակարգի 3-րդ կետի համաձայն Ջ. Բաղդասարյանը ներկայացրեց 2008 թվականին հանձնաժողովի քննարկվելիք հարցերը, որի վերաբերյալ էլ արվեցին առաջարկություններ։

Մասնավորապես առաջարկվեց, որ հ/կ-ների կողմից ստեղծվի հաշմանդամների աջակցության հիմնադրամ, որին կաջակցի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը։

Քննարկվեցին նաև «Մատչելի համայնք» մրցույթի պայմանները, չափորոշիչները, ինչպես նաև դիմումների ընդունման և անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման ժամկետները։

Արտահայտվեցին՝

Ա. Ալավերդյանն առաջարկեց 2008 թվականի ընթացքում քննարկել հաշմանդամների բժշկա-սոցիալական փորձաքննության գործընթացում առկա խնդիրները։

Ֆ. Բերիկյանն առաջարկեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հանդիպում կազմակերպել հ/կ-ների և ԲՍՓՀ-ների նախագահների հետ։

Ս. Թադևոսյանը նշեց, որ ԲՈՒՀ ընդունվելու համար հաշմանդամություն ունեցող դիմորդները ստիպված են լինում ներկայացնել եզրակացություն՝ ԲՍՓՀ-ից տվյալ մասնագիտությունը ձեռք բերելու նպատակահարմարության մասին։

Որոշեցին՝

- Վերանայել «Մատչելի համայնք» մրցույթի հայտը՝ այն համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ։ Ինչպես նաև դիմումների ներկայացման ժամկետը հետաձգել մինչև ս/թ հունիսի 30-ը, իսկ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման ժամկետը՝ մինչև ս/թ նոյեմբերի 30-ը,

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում հանդիպում կազմակերպել ԲՍՓՀ և հ/կ նախագահների հետ,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ քննարկել ԲՈՒՀ ընդունվելու համար հաշմանդամություն ունեցող դիմորդներից պահանջվող ԲՍՓՀ եզրակացության նպատակահարմարության հարցը։

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար,
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով
զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ՝ **Ա. Վարդանյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ջ. Բաղդասարյան**